ԻԳ. Հազար վաթսունհինգին (1616) վանահայր եղավ Հովասափը՝ բնիկ վանքիս գյուղացի (Օհանավանից). և ահա դրանք կոչվում են Սեթենք: Սա կազմել տվեց մի հաշիվ. այստեղից իմացանք նրան և նույնիսկ թվականը: Գիրքը ահավասիկ գոյություն ունի:

ԻԴ. Հազար յոթանասունութ (1629) թվին վանահայր եղավ Հովհաննես Կարբեցին, որ Գայլն է, որին բազմաթիվ անգամ հիշատակել ենք: Սա լավատեղյակ էր տոմարի: Սրա օրոք Ջալալի կոչված ելուզակների կողմից այս Սուրբ ուխտը ավարվեց, ինչպես պատմում է Առաքել վարդապետը: Այս իմացանք նույն Գայլից:

ԻԵ. Հազար ութսուն թվին (1631) վանահայր և դպրապետ եղավ Ղուկասը՝ բազմահմուտ վարդապետը Մովսես կաթողիկոսի հրամանով: Այս իմացանք նրա աշակերտներից:

ԻԶ. Հազար ութսուներեք (1634) թվին վանահայր եղավ Հովհաննես եպիսկոպոս Կարբեցին՝ մի ճգնավոր ու սուրբ մարդ, գիտակ ամբողջ Հին ու Նոր կտակարանների ու պատմությունների: Սա այն Հովհաննեսն է, որ յոթ տարի պայքարել է դևերի հետ և հաղթել նրանց Լիմի անապատում: Այնտեղ վախճանվեց և թաղվեց Սաղմոսավանքում:

ԻԷ. Հազար ութսունհինգին (1636) վանահայր եղավ Առաքել վարդապետ Դավրիժեցին: Սա այն է, որ բազմաթիվ անգամ հիշատակել եմ և ամեն բան սրանից եմ հարցրել ու իմացել: Սա մնալով առաջնորդ մի տարի՝ թողեց, գնաց Էջմիածին և Հակոբ կաթողիկոսի հրամանով գրեց պատմությունը, մեռավ ու թաղվեց Էջմիածնում:

ԻԸ. Հազար ութսունվեց թվին (1637) վանահայր եղավ քաջ ու արի, չափազանց խելոք, գիտակ Հին և Նոր կտակարաններին Զաքարիա վարդապետ Վաղարշապատեցին՝ ճոխաբան ամեն բանի վերաբերմամբ և արդյունավոր խոսքով: Սրա պատմությունը հետո կարգով կգրենք ծնունդից մինչև մահ:

ԻԹ. Հազար հարյուր (1651) թվին վանահայր եղավ Կարբի գյուղաքաղաքից Հովհաննես վարդապետը՝ մի խոհեմ և հեզ մարդ: (Սա վանահայր նշանակվեց) Զաքարիայի հրամանով, որը (Զաքարիան) ամեն ինչ լավ կարգավորեց: Սրա որպիսության մասին նույնպես հետո կխոսեմ:

Լ. Հազար հարյուր քսանութ (1679) թվին վանահայր եղավ Սարգիս վարդապետը Հովհաննես վարդապետի հրամանով: Սա ևս

Կարբի քաղաքից էր: Սրա մասին էլ հետո կխոսեմ, որ այժմ գոյություն ունի և վարում է առաջնորդությունը ըստ ժամանակի թելադրանքի. թող տերը սատար ու օգնական լինի սրան, իսկ ինքը օրհնյալ լինի ամեն ժամ. ամեն:

ԳԼՈՒԽ ԺԳ
ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐՔԸ

Սա Վաղարշապատ քաղաքից Հովհաննես քահանայի որդին էր, որ ծնվել էր նույն քաղաքում: Երբ դեռևս ծծկեր էր, իր մոր գրկում, պարսից թագավոր Շահ Աբաս Առաջինը, այն որ Արարատյան ողջ երկիրը գերեվարեց և տարավ Պարսկաստան, ժողովրդի հետ ամբողջ ընտանիքով գնաց նաև տեր Հովհաննեսը: Սրա որդի Զաքարիան սնվեց ու զարգացավ: Նրան տվին Աստվածաշնչի ուսման ջուղայեցիների մոտ: Սա չափազանց սուր միտք ուներ և խիստ ջանասեր էր, քան իր դասընկեր մանուկները, ուստի արագ սովորեց Սաղմոսը, Շարականը, ապա առաքելական ու մարգարեական մատյանները ու բովանդակ Աստվածաշունչ գիրքը. սովորեց նաև բոլորգիրն ու նոտրգիրը: Հինգ ազգի լեզու էր իմանում՝ այսինքն հայերեն, թուրքերեն, պարսկերեն, ֆրանսերեն ու հնդկերեն, ճարտարախոս էր ու արագախոս, ճոխաբան էր ու լավ զրուցող, ամեն բանում հաջողակ էր ու բախտավոր, բեմբասաց էր ու ամրասիրտ:

Երբ Դավիթ կաթողիկոսը եկավ Սպահան, Զաքարիան գնաց և միացավ նրան, դարձավ նրա քարտուղարը: Միառժամանակ մնաց նրա մոտ, հետո քահանայության աստիճան ընդունեց մանուկ հասակում ու կուսակրոնի մաքրությամբ Քրիստոսն էր պատարագում: Այդպես մնաց մի որոշ ժամանակ, մինչև որ այնտեղ եկավ երկրորդ լուսավորիչ Մովսես վարդապետ Տաթևացին բազմաթիվ աշակերտներով: Զաքարիան լսելով նրա բարի համբավը՝ գնաց նրա մոտ ու աշակերտեց նրան, միշտ նրա հետ էր շրջում, նրա լավ քարտուղարն էր, մինչև Մովսես վարդապետը ստացավ կաթողիկոս դառնալու հրաման, եկավ Սուրբ Աթոռ Էջմիածին: Նրա հետ էր նաև Զաքարիան: Նրանից վարդապետության իշխանություն ընդունելով, ծառայում էր նրան: